

## Մի տերևի պատմություն

Աշուն էր: Ծեր կաղնու բարձր ճյուղից ընկավ մի դեղնած ու չոր տերև:

Ծառին նստած սկյուռիկն արդեն հասկացավ, որ արդեն աշուն է, օրերը սկսում են ցրտել ու շտապեց ընկույզի վերջին պաշարը հավաքելու:

Անին, կանգնած կաղնու տակ, անթարթ նայում էր վերև՝ մի կետի: Հանկարծ սկսեց վազել ընկած տերևի ետևից, որ ուժեղ քամուց օրորվելով վերջապես պոկվեց մայր ծառի ճյուղից և սկսեց թռչել: Անին վազում էր, որքան որ ուժերը հերիքում էին: Ուժեղ քամին գետնից բարձրացրեց փոշին և լցրեց նրա աչքերը:

Անին կանգ առավ ու այնքան տրորեց աչքերը, մինչև որ ծակծկող փոշու վերջին հատիկը դուրս թռավ: Ապա, լայն բացեց աչքերը, բայց տերևն այլևս չկար:

- Տեսնես ո՞ր կորավ,- մտածեց Անին: Հետո փակեց աչքերն ու մտքում փորձեց պատկերացնել փոքրիկ տերևի ճամփորդությունը՝ թռչելով սաղարթախիտ անտառների, գետերի վրայով՝ վերջապես ու՞ր պիտի նա հասնի: Միգուցե մի աշխարհ, որտեղ ամեն ինչ հեքիաթային է: Ո՞վ է փորձել երբևէ հետևել երկնքում թռչող տերևին: Ի՞նչ փորձությունների միջով է նա անցնելու, արդյո՞ք քամիների տարուբերումներից չի ընկնի ցած ու փշրվի: Անին մտաբերեց աշնանային այս օրերին իրեն շատ հանդիպած տերևների, որ առվակների խելքին ընկած խելառների պես ջրի հետ խաղալով, գլուխկոնձի տալով՝ հոսանքի հետ վազում էին, վազում: Տեսնես այդ ու՞ր են շտապում: Հաստատ դեպի հեքիաթային աշխարհ:

Անին ժպտաց ու վազեց տուն:

Այլևս տերևի կյանքն ավարտված էր...